

Խորենացին Մաթուսաղյին ու Թէոդորոսին հակառակ հայ եկեղեցու ամբողջ լրութեան հետ անբաժան մնաց : Կարեւոր է նոյնպէս դիտել, որ Վարդավառի կամ Պայծառակերպութեան տօնը եկեղեցու մէջ Զ. դարում հաստատուեցաւ : Ճառի լեզուն Խորենացու Պիտոյից Գիրքն է յիշեցնում :

632 թուից յետոյ Խորխոռունեաց Մովսէս եպիսկոպոսը այլ եւս երկար չապրեցաւ : Նա «լի եւ պարարտ ծերութեամբ» իր արդիւնաշատ կեանքը կնքեց 120 տարեկան հասակում 638 թուին .

Նոր Խախիջեւան  
Մայիս 1931

Ա. ԶԱՄԻՆԵԱՆ

## ԻՄ ԳԻւդս

Նորէն թախի՛ծն է գրկեր գիւղն աւերուն,  
Ու հով մը խուլ կը կաղկանձէ դաշտին մէջ  
Սուզն անպատում տերեւարափ ծառերուն,  
Եւ աշունն ալ կ'իյնայ առէջ առ առէջ :

Ու ես առջեւ գիւղանկարին այս տրտում  
— Պատերազմի արհաւիրքներն ողբերգող —  
Կը տառապիմ արտասուելու անկարող :

Ո՞վ իմ գիւղակս հայրենի, ո՛քք, աւերած,  
Այժըմ աւա՛ղ լը քուած նոյն իսկ երազէդ,  
Չորցած բաղեղ մ'ինչպէս ծառին պըլլըւած,  
Կը յամառիս պահել պատրաճի մ'անցեալէդ :

Դուն իմ սրտիս առկայծող ջահն ես սիրուն  
Զոր կը սպառնան մարել հովե՛րը վաղուան.  
Բայց ես, գի՛ւղ եմ, քեզ պիտի բնաւ չըմոռնամ . . . :

Ա. ՍԵՄԱ